



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԳԻ ԾԱՊԿՈՒՆՔ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Ծաղկունք, (0261)61104, (098)461103, tsaghkunq.gegharquniq@mta.gov.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ապրիլի 2014թվականի N 14-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թվականի օգոստոսի 13-ի N599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2014թվականի փետրվարի 10-ի N 12/1 դրական եզրակացությունը և համայնքի ավագանու 14.02.2014թվականի N 6 որոշումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ի կատարումն «Իրան- Հայաստան 400կվ լարման էլեկտրահաղորդման օղային գծի` Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1334-Ն որոշման պահանջների` ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի վարչական տարածքում գտնվող` համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0858 հա/կադաստրային ծածկագրեր` 05-047-0141-0039, 05-047- 0142-0090, 05-047-0140-0064, 05-047-0142-0089, 05-047-0303-0003/ արոտավայրերի և այլ հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխել` էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների հողերի կատեգորիայի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՊԵՏԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

20 14 թ. ապրիլի 10  
գ.Ծաղկունք